

Խ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Կ Ո Ղ Մ Ի Ց

«Մուրճի» ներկայ համարը լոյս տեսնելուց մի քանի օր յետոյ, օգոստոսի 26-ին, Վենետիկի ս. Ղազարի վանքում կը կատարուի Մխիթարեան Միաբանութեան երկու հարիւր ամեայ յօբելեանը:

Մեր ամսագրի ընթերցողները արդէն ծանօթացել են հռչակաւոր Միաբանութեան հիմնադրի, Մխիթար Սեբաստացու մանրամասն քննական կենսագրութեան հետ և հետզհետէ կը ծանօթանան նաև այն գործունէութեան հետ, որ ցոյց տուին Մխիթարի յաջորդները հայ գրականութեան ասպարէզում: Ներկայ րոպէին Մխիթարեանների նշանակութեան և մատուցած ծառայութիւնների գնահատութիւնը չենք տալիս մենք, այլ կամենում ենք շեշտել թէ որքան նշանաւոր է օգոստոսի 26-ի տօնը:

Մենք ընդունում ենք որ Մխիթարեան Միաբանութիւնը, անկախ այն պակասութիւններից և առաւելութիւններից, որ ունեցել է երկու հարիւր տարուայ ընթացքում իբրև մի վանական-կղերական հիմնարկութիւն, եղել է և այժմ էլ շարունակում է լինել մի գլոբալական ուժեղ գործօն, որ շատ է նպաստել մեր մտաւոր զարգացման:

Մեր խախուտ, երեքուն իրականութեան մէջ, ուր հիմնարկութիւնները այնքան սակաւարիւն են, այնքան սակաւակեաց, մի նշանաւոր, նմանը չունեցող երևոյթ է այն տոկուն յարատեւութիւնը, որ եւրոպական մի անկիւնում կորած փոքրիկ կղզու վրայ ապրող հայ միաբանութիւնն է ցոյց տալիս երկու հարիւր տարուայ իր

գործունէութեամբ: Երկու հարիւր տարի աշխատել ե-
ռանդով, երկու հարիւր տարի չը մոռանալ պարտաւո-
րութիւններ—դա մի շատ խոշոր երեւոյթ է մեր կեան-
քի մէջ, այնքան խոշոր ու բեղմնաւոր, որ ամբողջ հայ
ազգը, մեր խորին համոզմունքով, այսօր պիտի ցոյց
տայ այդ պատկառելի հիմնարկութեան միահամուռ
հիացմունք և երախտագիտութիւն:

Մի կողմ թողնենք պակասութիւնները, որոնք յա-
տուկ են մարդկային բոլոր գործերին: Մենք կարող ենք
և պիտի քննադատենք պակասութիւնները նոյն իսկ
շատ խիստ, շատ անողորմ կերպով: Բայց այսօր, երբ
հիմնարկութեան տուած օգուտների համագումարը
պէտք է աչքի առաջ ունեննալ, «Մուրճ», իբրև գրական-
հասարական օրգան, անկեղծ սրտից շնորհաւորում է
Մխիթարեանների յօբելեանը և ցանկանում է ս. Ղա-
զարի գրական ընկերութեան աւելի յարատեւութիւն,
աւելի մեծ եռանդ և տոկունութիւն այն ասպարէզի
մէջ, ուր այնքան մեծ պատուով գործել է նա մինչև այժմ:

Թո՛ղ երկու ամբողջ դարերը, որ այսօր Մխիթա-
րեան Միաբանութիւնը թողնում է իր ետևում, խրա-
տական դաս դառնան ասպագայի համար: Մենք ցան-
կանում ենք, որ այդ ասպագան լինի մի անձնուէր ծա-
ռայութիւն ամբողջ ազգի համար, որ կրօնը այլ ևս
խոչընդոտ չը դառնայ, կիրք, դառնութիւն, հիասթա-
փումն չառաջացնէր: Դա կը լինի այն ժամանակ, երբ
իւրաքանչիւրը մեղանից, թողնելով կրօնը մարդկային
խղճին և սրտին, գրկէր աւելի լայն ու մեծ հասկացո-
ղութիւն—հայութիւնը: Գրականութիւնը պիտի մարմ-
նացնէ մեղանում այս հասկացողութիւնը: Եւ Մխիթա-
րեան միաբանութիւնը, իբրև գրական-գիտական մի
խոշոր հիմնարկութիւն, թո՛ղ այս ճանապարհով ուղղէ
իր քայլերը անսայթաք, լի ամուր հաւատով և տոկուն,
անձնուէր աշխատութեամբ:

Մեր անկեղծ շնորհաւորութիւնները Մխիթարեան
ամբողջ Միաբանութեան: